ԿԱՊԱԼԱՅԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292>>

ք. Երևան «14» նոյեմբերի 2023թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժ/պ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՎԱԳ ՄԵՏԱԼ>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Պողոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. ԿԱՊԱԼԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. ԿԱՊԱԼԱՌՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հասուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[28.1]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 199-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 199-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 21817270 (քսանմեկ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ինչ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[31.1].

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխագելել:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինհրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման բացակայություն	Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախտումների վերաբերյալ » օրենսգրքի 157-15 հոդվածի 3-րդ մասի (100000 դրամ) համաձայն
2	Նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների չկատարում	Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծարելու հիմք
3	Շինարարական աղբի չտեղափոխում	Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախտումների վերաբերյալ » օրենսգրքի 43.1–ին հոդվածի 3-րդ մասի (մինչև 1 խմ 80 000 դրամ, 1 խմ-ից ավել 200 000 դրամ) համաձայն
4	Աշխատանքների կատարման ժամանակացույցի խախտում	Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծարելու հիմք

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գործման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանի կարգով լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները՝ այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«ՎԱԳԱ ՄԵՏԱԼ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ՀՀ, Կոտայք,Եղվարդ, գ. Զովունի 36 փողոց, տուն 14
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1570079407010100
Հ/Հ 900052470714	ՀՎՀՀ 03561825
ՀՎՀՀ 02593108	
Վ. Պապիկյան ---------- (ստորագրություն)	Ա. Դոլոյան ---------- (ստորագրություն)

Հավելված թիվ 1
«14» նոյեմբերի 2023 թ. կնքված
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292>>
ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի
Վերանորոգման աշխատանքներ

ՀՀ		Կատարվող աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Միավորի գինը՝ ներառյալ շահույթը	Գումարը
1	h11-225	Պատերի վրայից քայքայված գաջե սվաղի քանդում	քմ	314	420	131880
2	h11-225	Առաստաղի վրայից քայքայված գաջե սվաղի քանդում	քմ	168	680	114240
3	P14-320	Պատերի վրայից սոսնձաներկի մաքրում	քմ	51.3	340	17442
4	P14-321	Առաստաղի վրայից սոսնձաներկի մաքրում	քմ	75.1	600	45060
5	23-161	Բետոնե հատակների քանդում	քմ	28	500	14000
6	7_2	Փայտե դռների ապամնտաժում ներառյալ շրջանակները /վերադարձ/	քմ	8	1150	9200
7	c310-13	շինաղբի և ավելնորդ նյութերի ամենօրյա բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչև 13կմ	տ	8	8500	68000
8	շուկա	Մետաղապլաստե 60մմ բլոկներով 4խցիկից ոչ պակաս ուժեղացման ներդիրները 1.2 մմ հաստությամբ մետաղաթերթից ,դռների տեղադրում /ներառյալ սարքեր, կողպեքները/	քմ	115	36500	4197500
9	շուկա	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստությամն 4+4մմ ապակեպատերով ,հայկական պռոֆիլով պատուհանների տեղադրում/ներառյալ Ա փաթեթը/ բացվող	քմ	25	25000	625000
10	շուկա	Մետաղապլաստե սպիտակ 60մմ հաստությամն 4+4մմ ապակեպատերով ,հայկական պռոֆիլով պատուհանների տեղադրում/ներառյալ Ա փաթեթը/ չբացվող	քմ	68	23000	1564000
11	E15-246-1	Պատերի սվաղում գիպսոնիտե շաղախով	քմ	197	1850	364450
12	E15-251-1	Առաստաղի սվաղում գիպսոնիտե շաղախով	քմ	165	2100	346500
13	P14-419	Առաստաղի սվաղի ծեփամածիկում և երկշերտ ներկում լատեքսային լավորակ ներկով	քմ	608	2000	1216000

14	P14-418	Պատերի սվաղի ծեփամածկում, անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ և երկշերտ ներկում լավորակ լատեքսային ներկով:Գույնը պատվիրատուի հայեցողությամբ	քմ	2742	2100	5758200
15	E14-363	Պատերի ծեփամածիկում, անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ և երկշերտ յուղաներկում լավորակ յուղաներկով: Գույնը պատվիրատուի հայեցողությամբ	քմ	986	2300	2267800
16	շուկա	Նախամուտքերի և աստիճանավանդակների մետաղական բազրիքների և փայտե բռնակների նորոգում և ներկում	գծմ	11	1100	12100
17	շուկա	Նախամուտքերի և աստիճանավանդակների մետաղական բազրիքների և փայտե բռնակների պատրաստում, տեղադրում և ներկում	գծմ	11	9500	104500
18	E15-614կիս	Շքամուտքերի անհատական փոստարկղների նորոգում,ներկում երկշերտ յուղաներկով	քմ	11	1800	19800
19	շուկա	Շքամուտքերի անհատական նոր փոստարկղների պատրաստում և տեղադրում	հատ	2	8500	17000
20	15_22	Կոտրվածա պակիների փոխարինում նորով 2.2մմհաստությամբ	քմ	150	850	127500
21	E15-277ա	Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում	քմ	114	1850	210900
22	E15-273	Արտաքին պատերի սվաղում ցեմենտավազե շաղախով	քմ	48.1	1400	67340
23	Շուկա	Հատակների ցեմենտավազե շաղախով հարթակների պատրաստում 3սմ հաստությամբ	քմ	26	1500	39000

24	13-133	Շքամուտքի հատակի սալապատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ/հղկված ոչ ծակոտկեն/	քմ	16	12800	204800
25	13-131	Շքամուտքի աստիճանների և աստիճանահատակների երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ/հղկված,ոչ ծակոտկեն / եզրագծի մեկ կողմից աղեղային հղկումով	քմ	29	16500	478500
26	E6-19	Բետոնե թեքահարթակների իրականացում Բ-15 դասի բետոնով	խմ	3	48500	145500
27	13-127	Հատակների երեսպատում պրեսգրանիտե սալերով /չսահող/	քմ	59	6300	371700
28	13-127	Շրիշակների պատրաստում պրեսգրանիտե սալերով Հժ100 մմ	մ	742.6	1320	980232
29	25-16	Մուտքի մետաղական դռների պատրաստում և տեղադրում: Երկփեղկանի, ապակեպատ, հակակոռոզիան ներկով այնուհետև լավորակ ներկով նեկված: Դռան շրջանակ /ուղղանկյուն խողովակ 50x50x2մմ/,դռան փեղկի շրջանակ երկու գոտիներով /ուղղանկյուն խողովակ 50x30x2մմ/, դռան փեղկի թիթեղի և ապակու ամրացման համար շրջանակներ /ուղղանկյուն խողովակ 10x10x1/, դռան փեղկի թիթեղ 1,2 մմ /դռան մակերեսի 85%-ի չափով/, հեղյուս ապակու շրջանակի ամրացման համար, ծղնի /Լ= 15 -18սմ, փ = 14 -18մմ/, ապակի 4մմ /դռան մակերեսի 15%-ի չափով/, փակիչ դռան փեղկի համար, ապակի 4մմ /դռան մակերեսի 15%-ի չափով/ ապակու սեղմող ռետիններ, ինքնափակիչ դռան փեղկի համար /80-125կգ, շվեցար/, դռան ամրացման մետաղական դետալներ /շտիր Լ= 35սմ, փ = 12մմ/	քմ	12	30500	366000
30	25_16	Պատերի շարում պեմզաբլոկով 10սմ հաստությամբ	Խմ	47	22500	1057500

31	շուկա	1-ին հարկում էլ. մալուխների տեղադրում կաղապարի մեջ	գծ/մ	57.98	1200	69576
32	շուկա	Աստիճանավանդակների բազրիքների /0.05 X 0,03 մ/ փայտե բռնակների տեղադրում, հղկում նյութաներկում	գծ/մ	650.2	850	552670
33	շուկա	Նախամուտքի տանիքի ջրամեկուսիչ գորգի մեկշերտի իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով /հաստ, 3.0մմնավելի, 1 քմ-իզանգվածը 4 կգնավելի, ջերմակայունությունը /-25-15/ C, /+70-85/ C, ներառված նյութերի բարձրացումը	քմ	74	2254.87	166860
34		Մուտքի միջհարկային տարածքում տեղադրվա ծաղավանդակներից հին ներկի հեռացում և ներկում յուղաներկով	քմ	61.8	1400	86520
		Ընդամենը				21,817,270
		Ընդամենը				21,817,270

2023թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի միջոցներով բազմաբնակարան շենքերի թվով 18 մուտքերի վերանորոգման ցանկ

Հ/հ	Հասցե	Մուտք	Հարկ
1.	Ռոմանոս Մելիքյան 2Ա շենք		9
2.	Օհանովի 17 շենք	I	5
3.	Շերամի 115 շենք	III	9
4.	Սեբաստիա 27 շենք	I և II	3
5.	Բաբաջանյան 1 շենք	I	9
6.	Բաբաջանյան 55/1 շենք		9
7.	Սեբաստիա 82 շենք	III	9
8.	Անդրանիկի 56 շենք	I	9
9.	Անդրանիկի 67 շենք	II	9
10.	Իսակով 38/1 շենք	I	9
11.	Բ-2 թաղ 93 շենք	III	9
12.	Կուրղինյան 21/2 շենք		9
13.	Իսակով 52/2 շենք	II	9
14.	Բաբաջանյան 38 շենք	I	9
15.	Շերամի 93 շենք		14
16.	Անդրանիկի 29 շենք		1-ին հարկը հրդեհված
17.	Անդրանիկի 110 շենք		14
	ԸՆԴԱՄԵՆԸ	18 մուտք	

ՏԵԽՆԻԿԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2023թ. Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանում բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների

1. Շքամուտքի, մուտքի առաստաղի և պատերի քերում քսահարթեցումից և ներկերից:
2. Մուտքի միջհարկային տարածքում տեղադրված ճաղավանդակների ապամոնտաժում, մոնտաժում,պակաս ձողերի լրացում և ներկում յուղաներկով
3. Շքամուտքի, մուտքի, աղբախցերի դռների և պատերի երկշերտ ներկում յուղաներկով
4. Պատերի և առաստաղների վրայից քայքայված գաջի սվաղի քանդում:
5. Պատերի և առաստաղների սվաղում գաջի կամ գիպսոնիտի շաղախով:
6. Հին պատուհանափեղկերի քանդում:
7. Պատուհանների և միջնապատի շար ցեմենտ- ավազե շաղախով /միջնորմի սալիկով կամ չեչաքարե աղյուսով /պեմզաբլոկով 10սմ հաստությամբ 0.1*0.2*0.4 մ/
8. Նոր մետաղապլաստե երկշերտ պատուհանների տեղադրում, ներառյալ շեպերի և պատուհանագոգերի հարդարում, անկյունակների տեղադրում /չբացվող/
9. Նոր մետաղապլաստե երկշերտ պատուհանների տեղադրում, ներառյալ շեպերի և պատուհանագոգերի հարդարում , անկյունակների տեղադրում /բացվող/
10. Մետաղապլաստե դռների տեղադրում
11. Մինչև իրականացվող աշխատանքների սկսելը բնակարանների դռները, գազի հաշվիչները, էլեկտրական սարքերը փաթեթավորել պոլիէթիլենային թաղանթով:
12. 1-ին հարկում էլ. մալուխների տեղադրում կաղապարի մեջ
13. Մուտքի աղբատար և գազի խողովակների ներկում
14. Առաստաղի հարթեցում գիպսոնիտով, ծեփամածուկով և երկշերտ ներկում լատեքսային ներկով

15 Պատերի սվաղի ծեփամածկում, անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ և երկշերտ ներկում՝ լավորակ յուղաներկով /ներառյալ դռները և պատուհանների շրջանակները, 2-րդ շերտի ներկումը իրականացնել 1 օր հետո/

16. Պատերի սվաղի ծեփամածկում, անկյունային մասերում տեղադրելով հարդարման անկյունակներ և երկշերտ ներկում լավորակ յուղաներկով /ներառյալ դռները և պատուհանների շրջանակները, 2-րդ շերտի ներկումը իրականացնել 1 օր հետո/

17. Աստիճանավանդակների մետաղական բազրիքների վերանորոգում, պակաս ձողերի լրացում և յուղաներկում

18. Աստիճանավանդակների բազրիքների փայտե բռնակների տեղադրում /0.05 X 0,03 մ/ և յուղաներկում

19. Շենքի մուտքի աստիճանահարթակի երեսպատում բազալտե կամ գրանիտե սալերով 30մմ հաստությամբ /առանց ծակոտիների/

20. Նախամուտքի տանիքի ջրամեկուսիչ գորգի մեկ շերտի իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով /հաստ, 3.0մմ և ավելի, 1 քմ-ի զանգվածը 4 կգ և ավելի, ջերմակայունությունը /-25-15/ C, /+70-85/ C, ներառված նյութերի բարձրացումը

21. Աստիճանահարթակի համահարթեցում ցեմենտ-ավազային շաղախով 3սմ

22. Շքամուտքի հատակի երեսպատում պրեսգրանիտով 10մմ հաստությամբ

23. Շինարարական աղբի հավաքում, իջեցում, բարձում ձեռքով և տեղափոխում աղբավայր 12կմ հեռավորության վրա

24. Մուտքերում մաքրության ապահովում շինաշխատանքների կատարման ընթացքում և ավարտից հետո:

Կապալառուն պարտավորվում է պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո աշխատանքները մեկնարկել առավելագույնը եռօրյա ժամկետում:

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900052470714
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ----------
(ստորագրություն)

Կապալառու
«ՎԱԳԱ ՄԵՏԱԼ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայք,Եղվարդ, գ. Զովունի 36 փողոց, տուն 14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570079407010100
ՀՎՀՀ 03561825

Ա. Պողոյան ----------
(ստորագրություն)

Հավելված թիվ 2
«14» նոյեմբերի 2023 թ. կնքված
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292>>
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շքամուտքերի վերանորոգման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները**	Աշխատանքների սկիզբ է համարվում աշխատանքի և տեխնիկան հսկողության պայմանագրերը ուժի մեջ մտնելու օրվանից	**120-րդ օրացուցային օրը ներառյալ** /աշխատանքները պետք է կատավեն 30 օրվա ընթացքում՝ աշխատանքների ծավալի 20 %-ի չափով, 60 օրվա ընթացքում՝ 40%-ի չափով, 90 օրվա ընթացքում՝ 80%-ի չափով, մինչև պայմանագրի ավարտը աշխատանքների ամբողջ ծավալը/:
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900052470714
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ----------
(ստորագրություն)

Կապալառու
«ՎԱԳԱ ՄԵՏԱԼ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայք,Եղվարդ, գ. Զովունի 36 փողոց, տուն 14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570079407010100
ՀՎՀՀ 03561825

Ա. Պողոյան ----------
(ստորագրություն)

Հավելված N 3
«14» նոյեմբերի 2023 թ. կնքված
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292>>
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքների														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211113/19	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շքամուտքերի շինարարական աշխատանքներ	---	---	---	---	---	---	---	---	---	---	21 817 270	21 817 270	21 817 270

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900052470714
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ----------
(ստորագրություն)

Կապալառու
«ՎԱԳ ՄԵՏԱԼ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայք,Եղվարդ, գ. Զովունի 36 փողոց, տուն 14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570079407010100
ՀՎՀՀ 03561825

Ա. Պողոսյան ----------
(ստորագրություն)

Հավելված թիվ 4
« » նոյեմբերի 2023 թ. կնքված
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292>>
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » նոյեմբերի 2023 թ. կնքված
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292>>
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

AMERIABANK

09.11.2023թ.
O.AB.100.12CIB.PIED.0.21603.23

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.21603.23
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԱԳ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 4,413,000.00 (Չորս միլիոն չորս հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900015211429 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2024 թվականի մարտի 30-ի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 19 օգոստոսի 2024թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (gor.muradyan@yerevan.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

AMERIABANK CJSC
CORPORATE AND
INVESTMENT BANKING
DEPARTMENT
FOR CONTRACTS
AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

AMERIABANK

09.11.2023թ.
O.AB.100.12CIB.PIED.0.21615.23

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.21615.23
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՎԱԳ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 2,942,000.00 (Երկու միլիոն ինը հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900015211429 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2025 թվականի մարտի 30-ի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել՝ ոչ ավելի երկար, քան մինչև 19 օգոստոսի 2025թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (gor.muradyan@yerevan.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/292 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«AMERIABANK» CJSC
CORPORATE AND
INVESTMENT BANKING
DEPARTMENT
FOR CONTRACTS
AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou